Կարգապահական գործ թիվ ԿԳ-18014

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018 թվականի օգոստոսի 11-ի թիվ 199-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/147-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐԱՐԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Հարություն Հարությունյանի, Խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարդարյանի կազմով

Քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

Քննության առնելով փաստաբան Արարատ Բագրատունուն (արտոնագիր թիվ 335) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 23.02.2018թ-ին ներկայացվել է տեղեկանք, այն մասին, որ փաստաբան Արարատ Բագրատունին (արտոնագիր թիվ 335) 2016թ. մայիսից մինչև 2018թ. հունվար (ներառյալ) ամիսների համար անդամավճարի գծով ունի 108.000 (մեկ հարյուր ութ հազար) ՀՀ դրամ գումարի չկատարված պարտավորություն:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

Պալատի նախագահի 27.02.2018թ. թիվ 68-Ա/ԿԳ-18014 որոշմամբ փաստաբան Արարատ Բագրատունու նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 2.9.1 ենթակետի խախտման հատկանիշներով:

Սույն կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին 05.03.2018 թվականին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 11.08.2018թ., ժամը 10:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ 12 սենյակ):

3. **<u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>**

Փաստաբան Արարատ Բագրատունին թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել և բացատրություն չի տվել:

4. **<u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>**

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) 27.03.2018 թվականին փաստաբան Արարատ Բագրատունին դիմել է փաստաբանների պալատ՝ խնդրելով դադարեցնել իր փաստաբանական գործունեության թիվ 335 արտոնագրի գործողությունը:

Նշված փաստը հաստատվում է Արարատ Բագրատունու 27.03.2018 թվականի դիմումով:

2) Պալատի խարհրդի նախագահը իր՝ 07.04.2018թ. թիվ 7/2-Ա որոշմամբ փաստաբան Արարատ Բագրատունու դիմումը բավարարել է:

Նշված փաստը հաստատվում է Պալատի Խորհրդի՝ 07.04.2018թ. թիվ 7/2-Ա որոշմամբ

5. **<u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>**

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արարատ Բագրատունու նկատմամբ կարգապահական գործի վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ կարգապահական խախտումը կատարելուց հետո սույն օրենքով սահմանված կարգով փաստաբանի արտոնագրի գործողությունը դադարեցվել է*:

Տվյալ դեպքում Պատասխանողի արտոնագրի գործողությունը դադարեցվել է Պալատի խորհրդի նախագահի՝ 07.04.2018թ. թիվ 7/2-Ա որոշմամբ:

Նշվածը հաշվի առնելով, Խորհուրդը գտնում է, որ առկա է Օրենքի 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված կարգապահական գործի վարույթը կարճելու հիմքը:

Վերը նշվածից ելնելով՝ Պալատի խորհուրդը չի անդրադառնում Արարատ Բագրատունու կողմից անդամավճար չվճարելու վարքագծին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 28-րդ 1-ին մասի 4-րդ կետի պահանջներով, Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արարատ Բագրատունու (արտոնագիր թիվ 335) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ ՝ կարգապահական խախտումը կատարելուց հետո սույն օրենքով սահմանված կարգով փաստաբանի արտոնագրի գործողությունը դադարեցվելու հիմքով:

2. Պալատի աշխատակազմի ղեկավարին հանձնարարել՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Արարատ Բագրատունուն:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ որոշումը ստանալու օրվանից՝ մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում բողոքարկման համար սահմանված ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ **Հարություն Հարությունյան**

11 օգոստոսի 2018թ.
թիվ ԿԳ/147-Ա
ք. Երևան